ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 01/22

«ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԱՐԳԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՐԱԿԻ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

(այսուհետ՝ հանձնաժողով)

2022 թ. Հունվարի 14-ին կայացած նիստի

ք. Երևան

Նիստը նախագահում էր՝

Արթուր Մարտիրոսյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ),

Մասնակցում էին՝

Գոհար Մամիկոնյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության պետ (հանձնաժողովի անդամ),

Անուշ Մխիթարյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության ավագ մասնագետ (հանձնաժողովի անդամ),

Նարինե Հովհաննիսյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության ավագ մասնագետ (հանձնաժողովի անդամ),

Արմենուհի Պետրոսյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության գլխավոր մասնագետ (Հանձնաժողովի քարտուղար):

Օրակարգային հարցեր

1. Նիստի օրակարգի քննարկում:
2. Դրամաշնորհային մրցույթի մասին հայտարարության տեքստի քննարկում:
3. Դրամաշնորհային մրցույթի մասին հրավերների տեքստերի քննարկում:
4. Դրամաշնորհային մրցույթի հայտերի գնահատման թերթիկների ձևաչափի քննարկում:

5. Հաջորդ նիստի օրվա, ժամի և վայրի հաստատում:

1) Օրակարգի 1-ին հարց

Արթուր Մարտիրոսյանը ներկայացրեց հանաժողովի առաջին նիստի օրակարգի հարցերը:

Օրակարգի 1-ին հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվեց.

Հաստատել հանաժողովի առաջին նիստի օրակարգը:

Կողմ 4, դեմ 0

2) Օրակարգի 2-րդ հարց

Արթուր Մարտիրոսյանը ներկայացրեց Դրամաշնորհային մրցույթի մասին հայտարարության տեքստը:

Օրակարգի 2-րդ հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվեց.

Հաստատել Դրամաշնորհային մրցույթի մասին հայտարարության տեքստը (կցվում է):

Կողմ 4, դեմ 0

3) Օրակարգի 3-րդ հարց

Արթուր Մարտիրոսյանը ներկայացրեց Դրամաշնորհային մրցույթի մասին հրավերի տեքստերը:

Օրակարգի 3-րդ հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվեց.

Հաստատել Դրամաշնորհային մրցույթի մասին հրավերների տեքստը (կցվում է):

Կողմ 4, դեմ 0

4) Օրակարգի 4-րդ հարց

Արթուր Մարտիրոսյանը ներկայացրեց գնահատման թերթիկների ձևաչափի և գնահատման չափանիշները:

Օրակարգի 4-րդ հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվեց.

Հաստատել Դրամաշնորհային մրցույթի հայտերի գնահատման թերթիկների ձևաչափը (կցվում է):

Կողմ 4, դեմ 0

5) Օրակարգի 5-րդ հարց

Հանձնաժողովի հաջորդ նիստի օրվա, վայրի, ժամի քննարկում:

Օրակարգի 5-րդ հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվեց.

Հանձնաժողովի հաջորդ նիստի օրը սահմանել 2022 թվականի փետրվարի 3-ը, ժամը 14:00, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 5-րդ հարկի դահլիճում՝ հասցե՝ Վազգեն Սարգսյան 3:

Կողմ 4, դեմ 0

Արթուր Մարտիրոսյան

Գոհար Մամիկոնյան

Անուշ Մխիթարյան

Նարինե Հովհաննիսյան

Արմենուհի Պետրոսյան